CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

RA MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORTS

La Biennale di Venezia
60. Esposizione Internazionale d'Arte
Partecipazioni Nazionali

Nina Khemchyan

ECHO

Արձագանք

Նինա Խեմչյան

The National Pavilion of the Republic of Armenia
60th International Art Exhibition - La Biennale di Venezia

Հայաստանի Հանրապետության ազգային տաղավար
Վենետիկի արվեստի 60-րդ բիենալե

This catalog is dedicated to the Armenian National Pavilion at
the 60th International Art Exhibition – La Biennale di Venezia, featuring *Echo*,
a multimedia exhibition by Nina Khemchyan, held in Venice from April 20 to November 24, 2024.

Պատկերագիրքը ներկայացնում է 2024 թվականի ապրիլի 20-ից նոյեմբերի 24-ը Վենետիկի 60-րդ
արվեստի միջազգային բիենալեում Հայաստանի ազգային տաղավարը, որ ցուցադրում էր
Նինա Խեմչյանի «Արձագանք» մուլտիմեդիա նախագիծը:

SEVEN DEADLY SINS

The exhibition of the Armenian National Pavilion is marked with the project *Seven Deadly Sins* by Nina Khemchyan: a monumental 50-meter paper roll artwork with a modern iconographic illustration of human sins. It is divided into seven distinct parts, each representing one of the sins: *pride, envy, wrath, sloth, greed, gluttony,* and *Lust*. The choice of black ink on white paper not only provides a stark, graphic quality but also symbolizes the polarity of morality and immorality inherent in the concept of sins. Each episode is rich in symbolism and detailed imagery, crafted with graphic, grotesque visuals that are both captivating and thought-provoking.

The first gallery of the pavilion is both the beginning and, at the same time, the end of the visitor's unique journey. The *Echo* begins and ends along this serpentine path of sins. This section is the closest to humanity, the most earthly, and the most perceptible, both conceptually and visually. Each 7 meters of the 50-meter paper is filled with "illustrations" of fundamental human flaws, where the images transform into narratives—literal visual texts—in contrast to the immediately following section of the National Pavilion, not only in terms of media (paper vs. clay) but also conceptually, as texts are transformed into images. The *Seven Deadly Sins* also make the subsequent galleries and the exhibition's conclusion more unexpected and mystical, centered around the axis of Mashtotsian chants of repentance and the concept of eternity.

ՅՈԹ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐ

Ազգային տաղավարի ցուցադրության մուտքը նշանավորվում է Նինա Խեմչյանի «Յոթ մահացու մեղքեր» աշխատանքով՝ 50 մետր երկարությամբ ամբողջական թղթե մոնումենտալ ստեղծագործություն՝ մարդկության մեղքերի արդի պատկերագրությամբ մի կոթողային գլանակ: Այն բաժանված է յոթ մասերի, որոնցից յուրաքանչյուրը անդրադառնում է մեղքերից մեկին. բղջախոհություն, որկրամոլություն, ծուլություն, ագահություն, բարկություն, հպարտություն, նախանձ: Աշխատելով սև թանաքով սպիտակ թղթի մակերեսին՝ արվեստագետը ոչ միայն կտրուկ, գրաֆիկական որակներ է հաղորդում ստեղծագործությանը, այլև փոխանցում է մեղքերի ակունքում եղած բարոյականի ու անբարոյականի բևեռային տարբերության հղացքը: Յուրաքանչյուր դրվագ խորհրդանշական է, միևնույն ժամանակ գրաֆիկական և գրոտեսկային, որ ոչ միայն գերում է, այլև մտորելու տեղիք է տալիս:

Տաղավարի առաջին սրահը այցելուի յուրահատուկ ճամփորդության սկիզբն ու, միաժամակ, վերջն է. մեղքերի զարտուղի ճանապարհով է սկսվում և ավարտվում «Արձագանք» ցուցադրությունը: Այն ամենամոտն է մարդուն, ամենաերկրայինը, ամենաընկալելին՝ թե՛ գաղափարական, թե՛ վիզուալ լեզվի տեսանկյունից: 50 մետրանոց թղթի յուրաքանչյուր 7 մետրը հարուստ է մարդկային հիմնավոր արատների «նկարազարդումներով», որտեղ պատկերները վերածվում են պատումների՝ բառացի վիզուալ տեքստերի՝ հակադրվելով Ազգային տաղավարի անմիջապես հաջորդող հատվածին՝ ոչ միայն արվեստային տեխնիայի տեսանկյունից (թուղթ ու կավ), այլև՝ գաղափարական, երբ տեքստերն են վերածվում պատկերների: «7 մահացու մեղքեր»-ը նաև առավել անսպասելի ու շատ ավելի միստիկ են դարձնում ցուցադրության շարունակությունն ու վերջակետը՝ կառուցված Մաշտոցյան ապաշխարության շարականների ու հավերժության գաղափարի առանցքի շուրջ:

National Pavilion of Armenia: *Seven Deadly Sins* - Indian ink, paper
Հայաստանի ազգային տաղավար. «Յոթ մահացու մեղքեր» - Թուղթ, տուշ
70x5000 cm
2018

ECHO

This central component of the National Pavilion comprises eleven blue ceramic spheres, sculptures in clay. Each of these spheres is adorned with golden incrustations, representing a specific selection of Armenian *sharakans*, eleven chants of repentance, written by Mesrop Mashtots (4-5th century AD). He was the inventor of the Armenian alphabet, philosopher, theologian, priest, and poet. Mashtots is a fundamental figure in the history and culture of his country: a spiritual leader, founder of Armenian sacred music, and a true enlightener.

For a long time, Nina Khemchyan has been immersed in Mashtots' work. Eventually, a unique encounter renewed the artist's vision: the enigmatic voice of the singer Hasmik Baghdasaryan-Dolukhanyan who had been performing Mashtots' *sharakans*, written in the 5th century. This discovery gave birth to the project *Echo*, which also became the title of the exhibition of the Armenian National Pavilion; a delicate and contemporary interpretation of an essential piece of Armenian identity that went beyond the borders of Armenian culture.

This physical installation is supplemented by an *a capella* performance of the hymns by Hasmik Baghdasaryan-Dolukhanyan: an artistic fusion of physical sculpture and music, blending the tangible and auditory to represent Armenian sacred music in a new and evocative way. The words, specifically the letters forming these words transforming into chants, become significant elements in these pieces. Words translate into visual codes, creating a meditative environment: words are Armenian, the ideas are of cosmic proportions. Mashtots' legacy is built around universal ideas and values that touches every soul.

ԱՐՁԱԳԱՆՔ

Հայաստանի ազգային տաղավարի կենտրոնական ինստալյացիան բաղկացած է օդում, կարծես անկշռության մեջ կախված տասնմեկ կապույտ կերամիկական գնդերից՝ կավե քանդակներից:
Այս աշխատանքներից յուրաքանչյուրի վրա ոսկե տառերով պատկերագրված է հայոց պատմության ու մշակույթի առանցքային ֆիգուր Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության տասնմեկ շարականներից յուրաքանչյուրը:

Նինա Խեմչյանը երկար տարիներ ուսումնասիրել է Մաշտոցի ժառանգությունը: Նրա շարականների կատարումը Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանի կողմից Նինայի արվեստային տեսլականին նոր խթան տվեց: Այդպես ծնվեց «Արձագանք» նախագիծը, որը դարձավ նաև Հայաստանի ազգային տաղավարի խորագիրը. հայկական ինքնության կարևոր շերտի նուրբ և արդի մեկնաբանություն, որ հայ մշակույթի սահմաններից անդին է:

Ինստալյացիայի անբաժան մաս է կազմում Հասմիկի կողմից Մաշտոցի ստեղծած հոգևոր երգերի ակապելլա կատարումը. շոշափելի քանդակի և անշոշափելի ձայնի արվեստային միահյուսում, որ ներկայացնում է միջնադարյան երաժշտությունը արդիական կերպով: Բառերը, հատկապես այդ բառերը կազմող տառերը, որ վերածվում են շարականների, դառնում են այս աշխատանքների հիմքը: Բառերը վերածվում են վիզուալ կոդերի՝ վերհանելով մի մեդիտատիվ տարածք. խոսքը հայերեն է, գաղափարը՝ տիեզերական: Մաշտոցի ժառանգությունը համամարդկային առանցքային գաղափարների ու արժեքների շուրջ է, որ դիպչում է յուրաքանչյուրին:

National Pavilion of Armenia: *Echo*, 11 pieces - Clay (faience), metal oxides, gold, platinum
Հայաստանի ազգային տաղավար. «Արձագանք», 11 նմուշ - Կավ (հախճապակի), մետաղների օքսիդներ, ոսկի, պլատին
Diameter/Տրամագիծ՝ 43-45 cm
2022

The golden sphere is a symbol of purification and perfect light. This is my response to those who destroy human, cultural, and spiritual values in our fragile world.

Մաքրության և կատարյալ լույսի խորհրդանիշ՝ ոսկե գունդ: Այսօր սա իմ պատասխանն է բոլոր նրանց, ովքեր բնաջնջում են մարդկային, մշակութային և հոգևոր արժեքները մեր այս փխրուն աշխարհում:

NINA



National Pavilion of Armenia: *Perfection* - Clay (faience), metal oxides, gold
Հայաստանի ազգային տաղավար. «Կատարելություն» - Կավ (հախճապակի), մետաղների օքսիդներ, ոսկի
Diameter/Տրամագիծ՝ 52 cm
2024

Սաղմոսարան և կրաքարյա լույսի խորհրդանիշ՝ ոսկե գունդ:
Այդքա՜ն սաստիկ է իմ գրգռումը քոյրդ նրանց, ովքեր ոչնչացնում են մարդկային,
փրկարարին և հոգևոր պարծանքները մեր այս փիղրուն աշխարհում:
Մեղքերս՝ ի՜մ գթասիրտ Աստված,

Khem
E~C
Կրնաս
CAFESJIAN
CENTER FOR THE ARTS



Nina Khemchyan lives and works in Paris. Graduating from the Department of Industrial Design at the Yerevan State Institute of Theatre and Fine Arts in 1988, Nina has actively presented her works in various exhibitions in Armenia and abroad since then. After moving to France, she continued her education at the National Grand School of Applied Arts and Crafts (École Nationale supérieure des arts appliqués et des métiers d'art) from 1996 to 1998. For more than 30 years, the artist has exhibited her work in galleries and museums throughout Paris and Europe and has participated in numerous art fairs and festivals. Working in different media, Nina prefers clay, while also creating graphic pieces on paper. Khemchyan's works are held in many private collections in Armenia and abroad and are part of the collections of the Yerevan Modern Art Museum and the Sergei Parajanov Museum.

Նինա Խեմչյանը ապրում և ստեղծագործում է Փարիզում: Ավարտելով Երևանի պետական գեղարվեստաթատերական ինստիտուտի արդյունաբերական դիզայնի բաժինը 1988-ին՝ Նինան ակտիվորեն ստեղծագործում և ցուցադրվում է Հայաստանի ու արտերկրի տարբեր ցուցահանդեսներում: Տեղափոխվելով Ֆրանսիա 1990-ին՝ շարունակում է կրթությունը Փարիզի Կիրառական արվեստի և արհեստի ազգային բարձրագույն դպրոցում (ENSAAMA) 1996-1998 թվականներին: Շուրջ երեսուն տարի Նինայի ստեղծագործությունները ներկայացվում են փարիզյան ու եվրոպական ցուցասրահներում, միջազգային փառատոներում: Նա աշխատում է տարբեր մեդիաներում, հիմնականում նախընտրելով կավը, ինչպես նաև ստեղծում է գրաֆիկական աշխատանքներ: Նրա աշխատանքները գտնվում են Հայաստանի և արտերկրների մասնավոր հավաքածուներում, ինչպես նաև Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի և Սերգեյ Փարաջանովի թանգարանի հավաքածուների մաս են կազմում: